

PEARLS OF ARMENIAN HERITAGE

Մովսէս Խորենացի (Հինգերորդ դար)

Հայոց պատմահայրն է Մովսէս Խորենացին: Գիրերու գիտով մենք սկսանք գրել եւ կարդալ հայերէն մեր լեզուն, եւ այդ կայծը հազի թէ յիսուն տարիէն բորբոքեցաւ եւ կազմեց մեր ինքնութեան հիմերը որոնց վրայ բարձրացաւ հայ նկարագիրին հրաշալի ապարանքը: Հայ ժողովուրդը՝ ազատանի, ռամիկ եւ իշխանագուն՝ ուզեցին գիտնալ իրենց պատմութիւնը, նախնիներուն քաջութիւնները, անոնց կատարած գործերը: Ազաթանգեղոս եւ Բիւզանդարանը պատուհաններ եղան հայոց կեանքին մէջ կայացած դրուագներու, բայց Խորենացին եղաւ՝ որ իր պատմութեամբ այդ դրուագները տեղադրեց իրենց հունին մէջ, ցոյց տալով որ իրենց օրերուն ապրող մեծերը ժառանգորդներն էին անելի մեծ եւ հերոսական քաջերու, եւ թէ մեզի հասած առատագոյն կեանքն ու հանճարը կը բխէր առատ եւ հզօր աղբիւրներէ:

Պատմահօր համբաւին շնորհիւ անոր անունին եւ հեղինակութեան կապուեցան շատ գործեր, որոնք գրուած էին իրեն յաջորդող դարերուն՝ տարբեր հեղինակներէ, կամ գուցէ նոյնիսկ իր հոգիէն ներշնչուած աշակերտներէ: Այս պատճառով բանասէր պատմագէտներ կը դժուարանան որոշել թէ ի՞նչ դարուն ապրած հեղինակ է ստուգի Պատմահայրը: Արդարեւ, անոր մասին պատմական յիշատակները կը սկսին շուրջ 410-ական թուականէն եւ իրեն ընծայուած գործերուն մէջ յիշատակուած դէպքեր կան որ տեղի ունեցած են շուրջ 870-ական տարիներուն: Այնքան մեծ եղած է Պատմահօր ազդեցութիւնը, որ 400 եւ անելի տարիներ անոր անունը գործածուած է պատմելու համար հայ հանճարին մեծութիւնները: Այսպէս՝ անոր ընծայուած են “Գիրք Պիտոյից” հռետորաբանութեան դասագիրք մը, “Աշխարհացոյց” տիտղոսով աշխարհագրական գործ մը, ինչպէս նաեւ բազմաթիւ վէպերու, ներբողներու, շարականներու, եւ իմաստասիրական ճառերու թարգմանութիւններ կամ գրութիւններ:

Խորենացիին պատմական իսկական կեանքը կը զետեղուի 410–490 թուականներուն: Սահակ Հայրապետ եւ Մեսրոպ Մաշտոց կ’ուղարկեն զինք ուսանելու համար ասորի, յունարէն եւ լատիներէն դպրութիւնները Եդեսիա, ապա Պաղեստինի Կեսարիոյ քաղաքը, եւ անկէ ալ Եգիպտոսի Աղեքսանդրիա: Այստեղէն կը ճամբորդէ դէպի Աթենք, բայց փոթորիկ մը կը պարտադրէ նաւապետին ուղղուելու դէպի Իտալիա՝ Հռոմ, ոսկից կ’անցնի դէպի Աթենք, եւ հուսկ՝ կը վերադառնայ հայրենիք շուրջ 460-ական տարիներուն, գտնելով զայն Հայոց երեսունվեց տարի տելող պատերազմին (449–485) արհաւիրքներէն աներուած եւ առանց առաջնորդի:

Ուսումնական տարիներուն արդէն սկսած է հաւաքել ատաղձը հայ ժողովուրդին ծագման յիշատակներուն: Սահակ Բ Բագրատունի հայոց մարզպանը (+482) կը յանձնարարէ Խորենացիին գրել Հայոց Պատմութիւնը: Խորենացիին ամէնէն կարեւոր աշխատութիւնն է այս, որ մէկտեղ կը բերէ հայոց պատմութիւնը սկիզբէն մինչեւ շուրջ Քրիստոսէ ետք 480-ական տարիները:

